

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### 1. Զարկային և մաքսային օրենսդրության նորություններ 2

1.1 ԶՅ կառավարության որոշումներ ----- 2

1.2 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ ----- 2

### 2. Զարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ 9

2.1 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների ----- 9

2.2 ԶՅ ԿԱ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ ----- 10

2.3 Զարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ----- 11

# 1. ԶԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1.1 ԶՅ կառավարության որոշումներ

Փաստաթուղթ	«Ռոյալթիների հաշվարկման համար իրացումից հասույթի հաշվարկման կարգը հաստատելու մասին» ԶՅ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	29 դեկտեմբերի 2011թ, N 1901-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 5 (879), 25.01.2012թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2012թ. հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվում է ռոյալթիների հաշվարկման համար իրացումից հասույթի հաշվարկման կարգը, որով սահմանվում է ռոյալթի վճարողների կողմից՝

1) հանքարդյունաբերության արտադրանքի՝ մետաղի խտանյութի իրացումից հասույթի

հաշվարկման կարգը,

2) խտանյութի փոխարեն ձուլվածք կամ հանքաքարի, խտանյութի, ձուլվածքի, վերամշակման արդյունքում ստացված ցանկացած վերջնական արտադրանք իրացվելու դեպքում իրացումից հասույթի հաշվարկման կարգը:

Փաստաթուղթ	«Հարկային մարմնի կողմից պարտադիր կուտակային վճարների և դրանց վերաբերյալ տեղեկատվությունը մասնակիցների ռեեստր վարողին փոխանցելու հետ կապված սխալները շտկելու կարգը հաստատելու մասին» ԶՅ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	19 հունվարի 2012թ, N 74-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 8 (882), 15.02.2012թ.
Ուժի մեջ է	2014 թվականի հունվարի 1-ից

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվում է հարկային մարմնի կողմից պարտադիր կուտակային վճարների և դրանց վերաբերյալ տեղեկատվությունը մասնակիցների ռեեստր վարողին փոխանցելու հետ կապված սխալները շտկելու կարգը:

## 1.2 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ավտոտրանսպորտային միջոցների նկատմամբ մաքսային հսկողության և ձևակերպումների իրականացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի 2003 թվականի փետրվարի 21-ի թիվ 03/11-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության 2003 թվականի մարտի 24-ի թիվ 3-Ն համատեղ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԶՅ ԿԱ ԶՅ ոստիկանության պետի և ԶՅ ԿԱ ՊԵԿ նախագահի համատեղ հրաման
Ամսաթիվը և համարը	16 դեկտեմբերի 2011թ. N 6-Ն, 22 դեկտեմբերի 2011թ. N 3410-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N 3 (416), 01.02.2012թ.

### Համառոտ նկարագիր

Հրամանով հաստատվում է ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ավտոտրանսպորտային միջոցների նկատմամբ մաքսային հսկողության և ձևակերպումների իրականացման կարգը, որով կարգավորվում են «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար», «վերաներմուծում», «սեփականության իրավունքից

հրաժարում՝ հոգուտ պետության» և «արտահանում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմներով ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող տրանսպորտային միջոցների նկատմամբ մաքսային հսկողության և ձևակերպումների իրականացման հետ կապված հարաբերությունները:

Փաստաթուղթ	«Անձնական հաշվի քարտից հատուկ անձնական հաշվի քարտ և հատուկ անձնական հաշվի քարտից անձնական հաշվի քարտ հաշվանցումներ կատարելու համար հարկ վճարողի դիմումի, հարկային մարմնի կողմից կազմված եզրակացությունների և եզրակացությունների մասին ամփոփ տեղեկանքների ձևերը հաստատելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	14 հոկտեմբերի 2011թ, N 2877-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 3 (416), 01.02.2012թ.

### Համառոտ նկարագիր

Հրամանով հաստատվում են «Անձնական հաշվի քարտից հատուկ անձնական հաշվի քարտ հաշվանցում կատարելու մասին» և «Հատուկ անձնական հաշվի քարտից անձնական հաշ-

վի քարտ հաշվանցում կատարելու մասին» դիմումների, եզրակացությունների և եզրակացությունների մասին ամփոփ տեղեկանքների ձևերը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2007 թվականի հուլիսի 13-ի N 7-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	21 դեկտեմբերի 2011թ, N 3279-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 3 (416), 01.02.2012թ.

### Համառոտ նկարագիր

Հրամանով մի շարք փոփոխություններ և լրացումներ են կատարվում ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության պետի 2007 թվականի հուլիսի 13-ի N 7 հրամանով հաստատված «Հողի հարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգում: Սահմանվում է, որ ֆիզիկական անձին պատկանող հարկվող օբյեկտն օտարելու դեպքում Նոր սեփականատիրոջն անցած հողի հարկի չմարված պարտավորությունները, ինչպես նաև հարկվող օբյեկտի հողի հարկի գծով օտարման օրվան հաջորդող ժամանակաշրջանի համար վճարումները հաշվառվում են նախկին սեփականատեր ֆիզիկական անձին հաշվառող մարմնի հաշվառման տվյալներով: Նոր սեփականատեր հա-



մարվող կազմակերպությունները հրահանգի N 2 հավելվածում բերված ձևով հաշվարկում կատարում են համապատասխան նշում տվյալ կամ նախորդ հաշվետու ժամանակաշրջանում ֆիզիկական անձանց հարկվող օբյեկտ համարվող հողամասի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու մասին:

Հրահանգում կատարված մեկ այլ լրացմամբ սահմանվում է, որ կազմակերպությունների համար 2011 թվականի 2-րդ կիսամյակից սկսած հողի հարկի հաշվարկման հաշվետու ժամանակաշրջան է համարվում հաշվետու տարվա կիսամյակը: Յուրաքանչյուր հաշվետու կիսամյակի համար հողի հարկ վճարող կազմակերպությունները հողի հարկը հաշվարկում են ինքնուրույն՝ հիմք ընդունելով տվյալ տարվա հողի հարկի հաշվարկման համար օրենքով սահմանված հարկման օբյեկտը (կադաստրային գուտ եկամուտը կամ կադաստրային արժեքը) ու հողի հարկի կիսամյակային

դրույքաչափերը՝ հաշվի առնելով հաշվետու կիսամյակում հողի հարկի հաշվարկման համար հողամասերի հարկվող օբյեկտ համարվելու (հողի հարկի պարտավորության) ամիսների թիվը, հողի հարկի պարտավորության առաջացման ու դադարման, ինչպես նաև ընդհանուր սեփականության դեպքում հողի հարկի հաշվարկման համար օրենքով սահմանված առանձնահատկություններն ու հողի հարկի արտոնությունները: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար հողի հարկ վճարող կազմակերպությունները հողի հարկը հաշվարկում են ինքնուրույն և մինչև տվյալ կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) վերոնշյալ հրահանգի N 2 հավելվածով հաստատած ձևով հողի հարկի հաշվարկները ներկայացնում են (ուղարկում են փոստով կամ հանձնում են ըստ պատկանելության) հողամասի գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2003 թվականի հունիսի 23-ի N 03/17-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	21 դեկտեմբերի 2011թ, N 3280-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր N 3 (416), 01.02.2012թ.

### Համառոտ նկարագիր

Հրամանով մի շարք փոփոխություններ և լրացումներ են կատարվում ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության պետի 2003 թվականի հունիսի 23-ի N 03/17-Ն հրամանով հաստատված «Գույքահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգում:

Հրահանգում կատարված լրացմամբ սահմանվում է, որ ֆիզիկական անձին պատկանող հարկվող օբյեկտը կամ դրա մի մասն օտարելու դեպքում նոր սեփականատիրոջն անցած գույքահարկի չմարված պարտավորությունները հաշվառվում են նախկին սեփականատեր ֆիզիկական անձին հաշվառող մարմնի հաշվառման տվյալներով՝ տվյալ հարկվող օբյեկտի գույքահարկի պարտավորությունների մասին համապատասխան տեղեկանքի, իսկ հարկվող օբյեկտի գույքահարկի գծով օտարման օրվան հաջորդող ժամանակաշրջանի



համար վճարումները նոր սեփականատիրոջ համար հաշվառվում են նախկին սեփականատեր ֆիզիկական անձին հաշվառող մարմնի հաշվառման տվյալներով՝ տվյալ հարկվող օբյեկտի օտարման օրվա դրությամբ օտարմանը հաջորդող ժամանակաշրջանի համար գույքահարկի հաշվառված գումարների մասին համապատասխան տեղեկանքի հիման վրա: Նոր սեփականատեր համարվող կազմակերպությունները վերոնշյալ հրահանգի N 5 հավելվածում բերված ձևով հաշվարկում կատարում են համապատասխան նշում տվյալ կամ նախորդ հաշվետու ժամանակաշրջանում

ֆիզիկական անձանց հարկվող օբյեկտ համարվող գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու մասին՝ իրենց հաշվառող մարմին ներկայացնելով տվյալ հարկվող օբյեկտի համար գույքահարկի չմարված պարտավորությունների, օտարման օրվան հաջորդող ժամանակաշրջանների համար հաշվառված գույքահարկի վճարումների կամ գույքահարկի պարտավորությունների բացակայության մասին համապատասխան տեղեկանք: Նշված տեղեկանքները չեն ներկայացվում, եթե նախկին և նոր սեփականատերերին հաշվառող մարմինը նույնն է:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2011 թվականի օգոստոսի 16-ի N 2034-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	29 դեկտեմբերի 2011թ, N 3514-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր N 3 (416), 01.02.2012թ.

### Համառոտ նկարագիր

Հրամանով փոփոխություն է կատարվում ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2011թ. օգոստոսի 16-ի «ԱԱՀ-ի հաշվարկի և ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների մասով գումարների հաշվանցման և (կամ) վերադարձի դիմումի ձևերը, դրանց լրացման կարգերը հաստատելու և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2010 թվականի հունիսի 14-ի N 1423-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N2034-Ն հրամանում, որի համաձայն ԱԱՀ-ի հաշվարկի ձևի 18-րդ կետում «Հաշվետու ժամանակաշրջանում ներմուծված՝ ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետը հետաձգված ապրանքների («Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածով սահմանված)» բառերը փոխարինվում են

«Ներմուծված այն ապրանքների, որոնց մասով օրենքի 6.1-րդ հոդվածի համաձայն առաջանում է պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումար» բառերով: Մեկ այլ փոփոխությամբ ԱԱՀ-ի հաշվարկի ձևի լրացման կարգի 22-րդ կետի 1-ին նախադասությունը շարադրվում է հետևյալ կերպ՝ «Հաշվարկի 18-րդ կետում՝ [Ա] վանդակում լրացվում է ներմուծված այն ապրանքների մաքսային արժեքը, որոնց մասով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասին համապատասխան հաշվետու ժամանակաշրջանում առաջացել է ԱԱՀ-ի վճարման պարտավորություն, իսկ [Բ] վանդակում՝ առաջացած ԱԱՀ-ի պարտավորության գումարը»:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2011 թվականի հունվարի 26-ի N 20-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Աֆրիկյանի հրաման
Ամսաթիվը և համարը	12 հունվարի 2012թ, N 1-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր N 3 (416), 01.02.2012թ.

### Համառոտ նկարագիր

Հրամանով ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2011թ. հունվարի 26-ի «Ռեզիդենտի կողմից շահութահարկի կանխավճարի եռամսյակային մեծությունը ինքնուրույն որոշելու մասին» և «Անհատ ձեռնարկատիրոջ կողմից եկամտահարկի կանխավճարի եռամսյակային մեծությունը

ինքնուրույն որոշելու մասին» N 20-Ն հրամանով հաստատված N 1 և N 2 հավելվածներում «2/3-ից» և «2/3»-ը բառերը փոխարինվում են համապատասխանաբար «75%-ից» և «75%-ը» բառերով:

Փաստաթուղթ	«Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված արտոնությունների կիրառման հետ կապված որոշ հարցերի վերաբերյալ» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	16 դեկտեմբերի 2011թ, N 46
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 3 (416), 01.02.2012թ.

### Համառոտ նկարագիր

«Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի վերջին պարբերության համաձայն՝ «այն հարկ վճարողները, որոնք վերոնշյալ օրենքն ուժի մեջ մտնելու պահին փաստացի կատարել են 2009թ-ի դեկտեմբերի 31-ը ներառող և (կամ) դրան նախորդող հաշվետու ժամանակաշրջանների արդյունքներով առաջացած՝ նույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված հարկային և այլ պարտադիր վճարների գծով ապառքների վճարումները, օրենքն ուժի մեջ մտնելու պահից ազատվում են այդ ապառքների գծով

հաշվարկված և չվճարված տույժերը և տուգանքները վճարելու պարտավորությունից»: Նշված դրույթի կիրառման հետ կապված հարցերի ճշտման նպատակով պարզաբանվում է, որ ապառքի՝ վճարած լինելու փաստը ներառում է նաև այն դեպքը, երբ ապառքը մարվել է ապառքի գումարի չափով միևնույն հարկատեսակի գծով դեբետային մնացորդով հաշվարկը հարկային մարմին ներկայացնելու կամ այլ հարկատեսակի գծով առկա՝ հաշվանցման ենթակա գումարի հաշվին տվյալ հարկատեսակի գծով առկա ապառքը մարվելու փաստով: Վերոնշյալը վերաբերում է մինչև 2011թ-ի հունիսի 4-ը հարաբերություններին:

Փաստաթուղթ	«Առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հողերի օտարման գործարքների ավելացված արժեքի հարկով հարկման վերաբերյալ» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	26 դեկտեմբերի 2011թ, N 47
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 3 (416), 01.02.2012թ.

### Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ կազմակերպություններին և ֆիզիկական անձանց պատկանող՝ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված գործառ-

նական նշանակության հողերը, որպես կանոն, օգտագործվում են կամ ձեռք են բերվում առևտրային կամ հասարակական նպատակներով (առողջարանների, հանգստյան տների

և նմանատիպ այլ օբյեկտների կամ հասարակական նշանակության օբյեկտների միջոցով գործունեության իրականացման, ազգաբնակչության բուժման և հանգստի կազմակերպման համար): Առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված՝ գործառնական նշանակության հողերը թեպետև ուղղակիորեն չեն թվարկված «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունում, սակայն դրանք ըստ էության հանդիսանում են առևտրային կամ հասարակական նշանակության գույք և հետևաբար ենթակա են ԱԱՀ-ով հարկման՝ օրենքով սահմանված ընդհանուր կարգով, որպես ապրանքի մատակարարում համարվող գործարք:



Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2005 թվականի մայիսի 30-ի N 1-05/05-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	04 Նոյեմբերի 2011թ, N 2905-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր N 4 (417), 03.02.2012թ.

### Համառոտ նկարագիր

Հրամանում կատարված լրացմամբ սահմանվում է, որ «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգի 23-րդ կետով նախատեսված՝ գործատուների կողմից հարկային մարմինն վարձու աշխատողների, նրանց վճարվող աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների և դրանց հավասարեցված եկամուտների մասին տեղեկություններ հայտնելու պահանջը վերաբերում է նաև.

1. ՀՀ կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև կնքված միջազգային համաձայնագրով ծրագրեր իրականացնող գրասենյակներին,
2. ՀՀ կառավարության և Շվեյցարիայի Համադաշնության կառավարության միջև կնքված միջազգային համաձայնագրով ծրագրեր իրականացնող գրասենյակներին,
3. ՀՀ կառավարության և Ճապոնիայի կառավարության միջև կնքված միջազգային հա-

մաձայնագրով ծրագրեր իրականացնող գրասենյակներին,

4. ՀՀ կամ ՀՀ կառավարության անուսից Միջազգային համագործակցության ճապոնական բանկի կառավարության միջև կնքված վարկային (դրամաշնորհային) պայմանագրերով ծրագրեր իրականացնող գրասենյակներին:

Հրամանում կատարված մեկ այլ լրացմամբ սահմանվում է, որ վերոնշյալ պահանջը չի վերաբերում.

1. ԱՄՆ կառավարության և ՀՀ կառավարության միջև կնքված «Հազարամյակի մարտահրավեր» համաձայնագրով ծրագրեր իրականացնող գրասենյակներին,
2. ՀՀ և Եվրոպական համայնքների հանձնաժողովի միջև կնքված շրջանակային համաձայնագրով իրականացվող գործողություններ իրականացնող կազմակերպություններին:

Փոփոխություններ են կատարվում հողիության և ծննդաբերության արձակուրդով պայմանավորված ժամանակավոր անաշխատունակության նպաստների հաշվարկման կարգում:

Հրամանում կատարված լրացմամբ սահմանվում է, որ հարկային մարմինը անհատ ձեռնարկատերերի և նոտարների նախորդ տարվա եկամուտների վերաբերյալ օրենքով սահմանված տեղեկանքը տրամադրում է անձի՝ տեղեկանքի համար դիմելու օրվա դրությամբ հարկային և սոցիալական վճարների գծով ունեցած պարտավորությունները կատարելուց հետո:



Փաստաթուղթ	«Առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման (հաշվառման) գրքի հարկային մարմնում հաշվառման և դրոշմակնքման հայտի ձևը հաստատելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ Նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	23 հունվարի 2012թ, N 12-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր N 4 (417), 03.02.2012թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

### Համառոտ նկարագիր

Հրամանով հաստատվում է առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման (հաշվառման) գրքի հարկային մարմնում հաշվառման և դրոշմակնքման հայտի ձևը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2009 թվականի դեկտեմբերի 2-ի N 3660-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ Նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	30 հունվարի 2012թ, N 20-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր N 5 (418), 15.02.2012թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

### Համառոտ նկարագիր

Հրամանում կատարված փոփոխությամբ՝

- խաղատների գործունեության կազմակերպման համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալի մասին հայտարարության մեջ «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 79-րդ հոդվածով սահմանված պատիկ թիվը սահմանվում է 5000000

(նախկինում՝ 4000000),

- շահումով խաղային ավտոմատների շահագործման համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալների մասին հայտարարության մեջ լոտոտրոն, բինգո և մեխանիկական վիճակահանության համար ծրագրավորված այլ սարքերի շահագործման, ինչպես նաև այլ ավտոմատների շահագործ-



մամբ շահումով խաղերի կազմակերպման համար հաստատագրված վճարի չափի հաշվարկման համար ելակետային տվյալներ են սահմանվում համապատասխանաբար՝ 18750 և 156250 (նախկինում՝ 15000 և 125000),

■ ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման համար հաստատագրված վճարների հաշվարկման ելակետային տվյալների մասին հայտարարության մեջ՝

■ «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 85.3-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պատիկ թիվը սահմանվում է 1250000 (նախկինում՝ 1000000),

■ «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 85.3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պատիկ թիվը սահմանվում է 93750 (նախկինում՝ 75000), Սահմանվում է, որ 2012 թվականի 1-ին եռամսյակի համար հանրային սննդի ոլորտում իրականացվող և ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեության տեսակների համար սահմանային չափերի ցուցանիշների մասին հայտարարությունները ներկայացվում են մինչև վերոնշյալ հրամանի ուժի մեջ մտնելը գործող ձևերին համապատասխան:

Փաստաթուղթ	«2011 թվականի հաշվետու տարվա համար ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկի լրացման և 2012 թվականի եռամսյակային կանխավճարների հաշվարկման վերաբերյալ» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի ժ/պ Ա. Աֆրիկյանի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	12 հունվարի 2012թ, N 3
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 5 (418), 15.02.2012թ.

### Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ ռեզիդենտները 01.01.2012թ.-ից հետո ներկայացվող 2011թ. հաշվետու տարվա համար շահութահարկի հաշվարկի [1500] տողում ցույց են տալիս հաջորդ տարվա կանխավճարների եռամսյակային գումարը՝ որպես 1501 և 1502 տողերի հանրագումարի 18.75 %-ի և 1503 տողի հանրագումար: Ընդ որում՝ այն ռեզի-

դենտները, որոնք հաշվետու տարին ավարտել են հարկային վնասով (տող 0500<0) կամ չեն ունեցել հարկվող շահույթ (տող 0500=0), կամ որոնք հաշվետու տարվա փաստացի շահութահարկը չի գերազանցել 500,0 հազ. դրամը (տող 1501+տող 1502 < 500000 կամ տող 1501+տող1502=500000), այդ տողը չեն լրացնում:

## 2. ՀԱՐԿԱՅԻՆ և ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԴՐՎԱԳՆԵՐ

### 2.1 | Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների

20.01.2011թ-ից մինչև 20.02.2012թ-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից քննարկվել է 12 դիմում-գանգատ, որից՝

- բավարարվել է 3
- կարճվել է 1
- մերժվել է 8 դիմում-գանգատ:

**2.2 | ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ**

Հ/Հ	Ցուցանիշ	Զափման միավոր	2012թ.	
			հունվար	Աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ (հունվար %)
1	ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից ՀՀ պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ, պետական տուրք և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ, այդ թվում՝	մլն դրամ	55,405.9	104.6
1.1	Հարկային եկամուտներ, այդ թվում՝	մլն դրամ	44,516.6	103.5
1.1.1	ԱԱՀ	մլն դրամ	23,786.9	110.9
1.1.2	Շահութահարկ	մլն դրամ	4,334.7	80.96
1.1.3	Եկամտահարկ	մլն դրամ	6,105.7	118.1
1.1.4	Ակցիզային հարկ	մլն դրամ	1,743.6	85.5
1.1.5	Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճար	մլն դրամ	3,769.6	122.4
1.1.6	«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեության տեսակներից հաստատագրված վճար	մլն դրամ	1,628.5	107.4
1.1.7	Մաքսատուրք	մլն դրամ	1,213.8	79.23
1.1.8	Այլ հարկային եկամուտներ	մլն դրամ	1,933.9	67.43
1.2	Պետական տուրք	մլն դրամ	1,648.5	116.5
1.3	Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	մլն դրամ	9,240.7	108.2
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը, այդ թվում՝	մլն դրամ	133 254	116.0
2.1	Արտահանում	մլն դրամ	28 058	117.1
2.2	Ներմուծում	մլն դրամ	105 195	115.7



ևս մեկ քայլ՝

## ԲԻԶՆԵՍԻՆ ԸՆԴԱՌԱՋ

եռամսյա պարբերականությամբ հրապարակվում են «Հարկատու» և «Մաքսատուն» ամսագրերը

**2.3 | Հարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ**

Հ/Հ	Ցուցանիշ	Չափման միավոր	2012թ. հունվար
1	Նոր գրանցված (ՀՎՀՀ ստացած) հարկ վճարողների թիվ, այդ թվում՝	հատ	1227
1.1	Ֆիզիկական անձ	հատ	962
1.2	Իրավաբանական անձ	հատ	265
2	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվ	հատ	3 374
3	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) թիվ	հատ	34
4	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) արդյունքում առաջադրված գումարներ	մլն դրամ	90,490,859
5	Բռնագանձման և սևանկության համար ներկայացված հայցերի թիվ, այդ թվում՝	հատ	233
5.1	Բավարարված	հատ	73
5.2	Մերժված	հատ	2
5.3	Զննության ընթացքում գտնվող	հատ	230
6	Բռնագանձման և սևանկության համար ներկայացված հայցերով գանձված գումարներ	մլն դրամ	359.8
7	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների թիվ	հատ	1934
7.1	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների համաձայն փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	32.5
8	ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից հարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումների թիվ	հատ	274
8.1	ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից հարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումներով փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	694.7
9	ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչության կողմից հարուցված քրեական գործերի թիվ	հատ	3
9.1	ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչության կողմից հարուցված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլն դրամ	76.2
10	ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի թիվ, այդ թվում՝	հատ	106
10.1	Ավարտված	հատ	3
10.2	Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված	հատ	3
10.3	Կասեցված	հատ	4
11	Քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլն դրամ	133.0

**ՎՍՏԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՌԱԽՈՍԸ՝**

**ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ**

**ՀԵՌԱԽՈՍԱԶԱՆԳԵՐԻ**

**ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ**

**«Թեժ գծից»՝ «Call center».**

**060 54 44 44**